

## ԿԻԼԻԿԵԱՆ ՄՈՒՏԻՐՆԵՐՈՒՆ

Օտարական, բարձրանանք սա դիմացի լերան վրայ՝  
 Որուն քովեն կը հոսի եղեգներուն մէջ լալով  
 Սիհոնն՝ ուր վաղը կարմիր քըղամիդներ պիտ' լըւան  
 Մայրերը մեր ցաւագին: Օտարական ըշտապէ,  
 Չի մերկ ոտքերըս կ'այրին մոխիրներուն վըրայ տաք  
 Եւ ըսկըսաւ քու երկար պարեգօտիդ քըղանցն ալ  
 Ճապաղիքի մէջ թըրջիլ: Օտարական, ըշտապէ'...  
 Կիսայրեաց ցուպս խօսքիս ուղղութեամբ ցոյց կու տայ քեզ՝  
 Ահա քաղաքն ու գիւղերն ու արօտներն ու ափերն՝  
 Ուրկէ անցաւ Կրակի Յեղն Ատտիղասի ձիուն վրայ:  
 Ծուխերն են հոն եւ բոցերն՝ որ տակաւին բլուրէն վեր  
 Յովին շունչով ալեծուփ կը սողոսկին, կ'ամփոփուին,  
 Յետոյ տրեն լեզուի պէս կատարն ի վեր կ'երկըննան:  
 Կը վառի հողն իսկ, նայէ՛, բորբ հորիգոնը մեր շուրջ  
 Յըրափողփող պըսակ մ'է՛ որուն կեդրոնը կանգուն  
 Մենք կը դողանք սըգաւոր ոգիներու պէս օտար:  
 Կը լըսե՛ս ձայնն հեռաւոր եղեգներուն բըռնկած՝  
 Որոնց միջեւ կ'ածխանան յաւերժարսերն անտառին:  
 Նարընջենի ճիւղերու ի՛նչ խընկաբոյր ճարճատիւն,  
 Ի՛նչ մոխրացող այգեստան, տատրակի ի՛նչ վուվուներ:  
 Բոցը կ'անցնի, ու քամին գալով անոր ետեւէն  
 Խանձած սեզերը առած սարերէն վեր կը մըրըկէ:  
 Ո՛վ դողահար մերկութիւն խըլուրդներու խուղերուն՝  
 Որոնք նըման ոզնիի արտերուն մէջ կ'յայտնըին,  
 Ո՛վ աւերակը բլրան վըրայ շինուած հիւղերուն՝  
 Ուրկէ կ'ելլեր հայ գեղջուկն առաւօտեան աղօթքով  
 Արարչութիւնը հողին արթընցնելու բահին տակ:  
 Օտարական, կը տեսնե՛ս ինչպէս այսօր տնակներն այդ